ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«08» 01 2024թ. հր. 05-Ա

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայության 2024 թվականի կարիքների համար Համակարգչային տեխնիկայի և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԳՆ-ՊԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ 00522502, գործունեության հասցե՝ ք.Երևան, Էրեբունի, Երկաթուղային 4 ./2/6) (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2023 թվականի դեկտեմբերի 28-ին ներկայացված հայտում 1,4 և 5-րդ չափաբաժիններիի (սեղանի համակարգիչներ, Օպերատիվ հիշողություն(ram) և Անխափան սնուցման աղբյուրներ) մասով հրավերի պահանջների նկատմամբ առկա են եղել անհամապատասխանություններ: Ընկերության կողմից խախտվել է հրավերի 2.1-րդ կետով սահմանված պահանջները՝ մասնավորապես հայտով ներկայացված չէին ապրանքների ամբողջական նկարագրերը, ինչպես նաև հայտում բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 41-րդ կետի, հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ 2023 թվականի դեկտեմբերի 29-ին ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ծանուցման արդյունքում Ընկերությունը սահմանված ժամկետում ամբողջությամբ չի շտկել անհամապատասխանությունները (չափաբաժին 1-ում որպես մոդել նշել է սեղանի համակարգիչ, 4 և 5 չափաբաժիններում որպես մոդել նշել է օպերատիվ հիշողություն և Անխափան սնուցման աղբյուր, իսկ Ապրանքային նշան, Ֆիրմային անվանում և Արտադրող չի նշել):

Հաշվի առնելով, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 42-րդ կետի դրույթները՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Գ. ՎԱՆՈՅԱՆ

Համապատասխանում է բնօրինակին
ՀՀ ԱԳՆ Անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝

Ն. Մելիք-Մուսյան